Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ՝ ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՅԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՀՌՈՄԻ ՊԱՊԻՆ ՀՂՎԱԾ ՅԱՎԱԿՅԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ

ՀՌՈՄ

ՍԻՐԵՑՅԱԼ ԵՂԲԱՅՐ Ի ՔՐԻՍՏՈՍ,

ԽՈՐԱՊԵՍ ՎԵՏՍՅԱԾ ԵՆՔ ԼՍԵԼՈՎ ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՅԻ՝ ԱՍՏԾՈ ՆՎԻՐՅԱԼ ԾԱՌԱՅԻ ՄԱՀՎԱՆ ՏԽՈՒՐ ԼՈՒՐԸ: ՆԱ ՄԵԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՄԱՏՈՒՑԵԼ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆԸ, ԵՎ ՆՐԱՆ ՄԻԵՏ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԿՀԻԵԵՆ: ՆԱ ԻՐՈՔ ՄԱՅՐ Է ԵՂԵԼ ԲԱԶՄԱՀԱԶԱՐ ԿԱՐԻՔԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ: ՆՈՒՅՆԻՍԿ ԻՐ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ ԳԱԼԻՔ ՍԵՐՆԴԻ ՀԱՄԱՐ ՆԱ ԿԴԱՌՆԱ ՈԳԵՇՆՉՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ:

ՆՐԱ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՎ ԱՅՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐ Ի ԹԻՎՍ ԱՄԵՆԱԲԱՐԵՐԱՐ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐԱՐՔՆԵՐԻ ՆԱ ԵՎ ԻՐ ՀՆԴԿԱՍՏԱՆՅԻ ՔՈՒՅՐԵՐԸ ՄԱՏՈՒՑԵՑԻՆ 1988 Թ. ԱՀԱՎՈՐ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ԱՂԵՏՅԱԼ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԱՅՍՏԵՂ՝ ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄ, ՄԻԵՏ ԿՀԻԵՎԵՆ:

ԹՈՂ ՄԵՐ ԵՐԿՆԱՅԻՆ ՀԱՅՐՆ ԸՆԴՈՒՆԻ ՆՐԱ ՀՈԳԻՆ ԴՐԱԽՏԱՅԻՆ ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ:

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈՎ,

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ